

10260

299.19

2-28

08 OCT 2010

2-24

299.19

2-28




Հ Ա Յ Ո Յ

Հեքսանասյան կրօնը

Ե Ր Ե Ի Ա Ն

Տպարան Արշակ Յակոբեանցի և Որդիք.

1912 թ.



06.06.2013
0105 130 8 0

10260

10/2006

Կարևոր համարելով սոյն հեթանոսական կրօնի դասատուարա-
կի տպագրութիւնը, որը համառոտաբար քաղելով էական յօդուած-
ները հեթանոսական գրքերից և գործադրած ձեռագիր տեա-
րակներից, հրատարակուեմ դասաւանդութեան համար:

Բ. Վաչյան
(Ինքնուրույն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԿԱՅԻՆ
ԿՐԹԱՆՈՍԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

4768-2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԿԱՅԻՆ
ԿՐԹԱՆՈՍԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ
1995

Ի՞նչպիսի տարրերից կազմուեցաւ Հայոց հեթանոսական կրօնը.

Բնութեան և երկնային մարմինների պաշտօնը.

Բազմաստուածութիւնը.

Հայոց գլխաւոր աստուածները և նոցա յատկութիւնները.

Գլխաւոր սրբավայրերը.

Աստուածապաշտութեան ձևերը.

Հայոց երկրորդական սրբութիւնները.

Օտար աստուածները.

Հայոց հեթանոսական կրօնի անկումը:

Հայաստանում բնակւող տեղացի և օտար ազգերի պատմական կեանքը առաջ բերեց հեթանոսական կրօնի մէջ երկու տարր՝ տեղական և օտար. առաջինի ներկայացուցիչներն էին բուն Հայոց աստուածները, երկրորդինը՝ օտար աստուածները: Տեղական տարրը կազմեցին հայերը, որոնք իրենց գոյութեան նախնական շրջանում հովուական կամ որսորդական թափառական կեանք վարելով, հետզհետէ ընտելացան նստակեաց կեանքին և երկրագործութեան: Թէ թափառական և թէ նստակեաց կեանքում նոքա անմիջապէս գործ են ունեցել բնութեան հետ: Բնութիւնն էր մատակարարում նոցա բոլոր պիտոյքները. դաշտերը, արօտատեղիները, անտառները, լճերը, գետերը և այլն, կազմում էին նոցա սիրելի առարկաները բնութեան մէջ: Ոչ պակաս տպաւորութիւն են թողնում նոցա վերայ և երկնային մարմինները. արեգակը տալիս է երկրին լոյս, ջերմութիւն և հասցնում է պտուղները, լուսինը լուսաւորում է երկիրս, աստղերը ուղեցոյց են՝ նոցանով էին որոշում գիշերուայ ժամերը և այլն:

Հայոց նախնական այս վիճակից առաջացաւ հեթանոսական կրօնի առաջին տարրը՝ բնապաշտութիւնը — այն է բնութեան և երկնային մարմինների պաշտելը:

Հայոց բնապաշտութեան ժամանակից միայն մի սրբութիւն է մեզ յայտնի. Սորենացու գիրք, Ա. գլխի Ի. Արայեան Արայն մեռնում է պատերազմում Շամիրամի հետ, թողնելով ամենահարուստ գործով և խօսքով մեծիմաստ որդի Անուշաւանին, որը Սօս էր կոչւում, որով-

հետև նուիրուած էր պաշտօնի համեմատ Արամանեկայ Սօսի ծառերի անտառին, որ Արամաիրունի էր: Այս ծառերի տերևների շարժումից, օգի հանդարտ կամ սաստիկ շնչելու ժամանակին, Հայոց աշխարհում սովորեցին գուշակութիւններ անել երկար ժամանակ:

Բնապաշտութիւնից գատ, Հայոց մէջ մի այլ գաղափար էլ է եղել՝ ճանաչել բարին և չարը. բարի ոգի և չար ոգի: Այս սկզբունքը դառնում է երկրորդ տարրը. ինչքան որ բարի օգտակար բան կայ բնութեան մէջ, այնքան էլ բարի ոգի կայ, և ընդհակառակը՝ ինչքան չար և վնասակար բան կայ, այնքան էլ չար ոգի: Հայոց մէջ նախապատուութիւնը առհասարակ բարու կողմն է եղած և ոչ չարի. սուրբ էին ճանաչուում միայն բարի ոգիները: Այս հաստատուում է նախ նրանով, որ հայոց աստուածութիւնների մէջ չկայ ոչ մէկը. որ չարութեան, խաւարի, աւերակների և մահու Աստուած լինէր. երկրորդ՝ հայոց գաղափարով մահն ու խաւարը չարերի վարձն է, չարութեան և ատելութեան հետևանք է և երրորդ՝ որ հայոց զիւցազուներն ևս մաքառում են միմեայն չարութեան և խաւարի դէմ:

Ժամանակի ընթացքում, երբ մարդիկ զարգանալով ձգտում են գտնել աներևոյթ արարիչներ, նոքա սկսում են հետզհետէ գաղափար կազմել գաղափարական աստուածների մասին և սրանից առաջ է գալիս բազմաստուածութիւնը:

Հայոց մէջ մի քանի գլխաւոր աստուածներ են մեզ յայտնի. նոքա բոլորը միասին կազմում են մի ընտանիք:

Ամենից մեծը իր յատկութեամբ է Արամազդը՝ աստուածների հայրը և տուջնորդը: Արամազդ անունը

նոյնն է, ինչ որ հին պարսից Ահուրա-մազդա, Որմիզդ, Օրմուզդ անունները: Ահուրա-մազդա նշանակում է էակ իմաստուն կամ տէր իմաստուն, որին հայերը սորա մէջ պատկերացնում էին իմաստութեան գաղափարը նա է եղել երկնի և երկրի արարիչը: Արամազդ կրում էր «արի» մակդիրը, որ նշանակում է ազնիւ ուժեք. արի Արամազդն է, որ շնորհում է երկրին ամենայն բարութիւն, լիութիւն և պարարտութիւն: Նա իւր ամեն մի յատկութեան համար ունի առանձին անուն ու մեհեան: Նորա յատկութիւններն էին ամենաբեղ կամ ամենաբեր, նշանակում է ամեն բերքերի տւող. հասցնող. այստեղ երևում է բնութեան պաշտօն: Ամանորայիք, այն է՝ մարդու կեանքի շրջանները նորոգող. սորա տօնը կատարելու համար նուիրուած էր Նաւասարդ ամիսը: Նաւասարդ նշանակում է նոր տարի: Երրորդ յատկութիւնը վերաբերում էր նորա պատկերին, որ գտնուում էր մի մեհեանի մէջ, ուր հիււրընկալում էին անցորդներին, ուստի և կոչւում էր Վանագրի դիք (վանատուր — օթևան տւող):

Արամազդի դուստրներն էին Անահիտ, Աստղիկ և Նուհէ: Անահիտ նշանակում է անբիծ, անարատ. նա կոչւում է Մեծ-տիկին և ճանաչուած էր իբրև «Մայր ամենայն զգաստութեանց, բարերար ամենայն մարդկային բնութեան, որով կայ և զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց, որ է փառք ազգիս մերոյ և կեցուցիչ»:

Աստղիկը գեղեցկութեան աստուածուհին էր, իսկ Նուհէն մի որոշ գաղափար չի ներկայացնում. միայն պէտք է կարծել, որ Արամազդի ծնունդը լինելով, տնտեսութեան, Հնարագիտութեան կամ մի այլ գաղափար պէտք է ներկայացնէ:

Հայր Արամազդի ընտանիքի չորրորդ անդամն է նորա

որդին՝ Միհր Աստուածը, որը «զգաստութեան» «գեղեցկութեան» «Հնարագիտութեան» դիցուհիներէ հարազատ եղբայրն էր. ապա ուրեմն իւր հօր և քոյրերի նման բարի և պատկառելի նշաններ պիտի ունենար: Նա ընկերական սիրոյ և հաւատարմութեան զազափարն էր. նրա մասնաւոր գործն էր հսկել ուխտապահութեան վերայ և պատժել ուխտադրութենքին:

Վահագն. Արամազդի փեսան և Աստղիկի ամուսինը. նրա մակղերն է «Քաջ» և նա ներկայացնում է քաջութեան զազափարը: «Վիշապաքաղ» ծնունդը:

Տիւր. Արամազդի դպիրն էր. կոչւում էր դպիր գիտութեան քրմաց, ուսումն, երազացոյց և որից երևում էր, որ սա էր քրմերին գիտութիւն տւողը և երազների զազանիքը մեկնողը: Երազամոյն էր կոչւում մեհեանի տեղը:

Աստուածներէ տեղը. Շատ հին ժամանակները, երբ որ կրօնը Բնապաշտութեան մօտիկ էր, մեհեաններ և պատկերներ չկային, այլ սկզբնական սրբավայրերն էին՝ անտառները, լեռները և այլն: Մեհեաններ շինուեցան շատ ուշ ժամանակներում, երբ սկսան աստուածների համար տեղեր երևակայել կամ ուրիշ ազգերին հետևել:

Արամազդի մեհեաններն գտնուում էին 1) Բարձր Հայկի Դարանաղիաց գաւառի Անի ամրոցում. (Եփրատի վրայ). 2) Բագաւանում (նպատասարի ստորոտում) և 3) Պաղատ սարի վերայ (Մեծ Զաւ գետի հովտում):

Անահտի մեհեանները գտնուում էին՝ 1) Երիզա աւանում (Գայլ գետի և Եփրատի խառնուելու տեղում). 2) Արտաշատում (Երասխի վրայ). 3) Աշտիշատում (Քարքէ սարի ստորոտում, Արածանու վրայ), որև կոչւում

էր աթոռ Անահտայ և 4) Դարբնաց քար ասուած տեղում (այժմու Հոգեաց վանքի տեղում, Արևելեան Տիգրիսի ափ կիւնքներում, ուր լինում էր հիւանդների բժշկութիւնը):

Աստղիկն ունէր երկու մեհեան. մէկը Աշտիշատում, որ կոչւում էր Սենեակ Վահագնի, միւսը Պաղատ սարի վրայ:

Նունէի Մեհեանը գտնուում էր Թիւն աւանում, Սեպուհ սարի ստորոտում:

Վահագնինը գտնուում էր Աշտիշատում, որ կոչւում էր Վահեվանեան: Միհրի մեհեանը գտնուում էր Դերջան գաւառի Բագասիջ աւանում:

Տիւրինը-Երազամոյն աւանում, որը գտնուում էր Վարշապատի և Աշտիշատի մէջտեղում:

Բացի մեհեաններից կային և բազիններ (Աստուծոյ տեղ) այսինքն սեղաններ, որոնց վրայ Աստուածներին զոհ էին մատուցանում: Բազինները գտնուում էին մեհեաններից դուրս. կային և պատկերներ, կուռքեր, որոնք և կոչւում էին Դիք. սոցա մեծ մասը Յունաստանից էին բերում: Հին կուռքերը շատ մեծ չեն եղել ինչպէս մենք երևակայում ենք. նոցանից ամենամեծերը մարդու հասակի չափ են եղել կամ փոքր աւելի, ինչպէս օրինակ Վահագնի կուռքը-վահագն Վիշապաքաղ, իսկ մնացածները, մանաւանդ նրանք, որոնք իւրաքանչիւր տան մէջ իրրև սրբութիւն էին պահում, շատ փոքր էին լինում:

Կուռքերը շինում էին զանազան նիւթերից, ինչպէս այդ երևում է Ազաթանգեղոսից, որովհետև նա կուռքերին անուանում է կռեալ, կոփեալ, քերեալ, ձուլեալ, տաշեալ

և այլն: Անահտի կուռքերը կոչուում էին. Ոսկեհատ, Ոսկեծին, Ոսկեմայր, Ոսկեղիք, և այլն, որ ցոյց է տալիս, թէ լինում էին և ոսկուց ձուլած պատկերներ:

Աստուածապաշտութիւնը կայանում էր նրանում, որ երկրպագութիւն էին տալիս կուռքերին կամ պատկերներին, զոհ էին մատուցանում և զանազան նուէրներ էին ընծայաբերում, ինչպէս այդ յիշում է Ադաթանգեղոսը. «Հրաման տայր Խոսրով, յեօթն բագինս ուխտաւոր լինել պատկերաց կռոց զիցն պաշտաման: Սպիտակ ցլով և սպիտակ նոխազօք, սպիտակ ձիովք ջորովք, ոսկեղէն և արծաթեղէն դարդուք ՚ի վերջաւորս փողփողեալս, նշանակապ, պալարակապ մեռաքսիւքն և ոսկովք պսակօք և արծաթի զոհարանօք, յաղօթս ցանկալիս ակամբ պատուականօք ոսկով և արծաթով ՚ի հանդերձս պայծառս և ՚ի զարդս գեղեցիկս զիւր ազգին Արշակունեաց զհայրենեացն պաշտամացն տեղիսն մեծարէր»: Ժողովուրդը երկիրդաժութեամբ պաշտում էր իւր աստուածներին, և չէր համարձակուում նոցա մօտենալ այլ կար առանձին քրմական: դաս և քրմերն էին միայն մօտենում աստուածներին. հարցնում էին նոցա կամքը և ժողովրդի կողմից զոհ էին մատուցանում: Նոքա ստանում էին աւարի մի հինգերորդ մասը:

Բացի գլխաւոր աստուածներէից կային և երկրորդական աստուածներ, այսինքն այնպիսի ոգիներ, որոնք առօրեայ կեանքում պաշտուում էին իբրև պատահական ոգիներ. (ինչպէս այժմ հրեշտակները): Նոքա պահապան էին բնութեան զանազան մասերին. կոչուում էին՝ քաջք (լեռների), պարիկք (հօտերի), ալք (ջրերի):

Այդ ոգիները իբրև բարի ոգիներ, ունէին իրենց հա-

կառակ չար ոգիներ կամ դևեր. բարիները պայծառ են ճանաչուած, լոյսի մէջ բնակւող. իսկ չարերը խաւար են և բնակւում են քարքարոտ անբնակ տեղերում: Այս ոգիների հետ ՚ի միասին պաշտուում էին՝ հուրը, ջուրը զանազան լեռները, անտառները, առանձին թփերը, և այլն. և այս բնապաշտութեան հետևանքն է:

Մինչև իսկ-ԺԲ-դարում կային Արևորդիք, որոնք արև էին պաշտում և մեծարում էին բարդի ծառը: Հայերը երկրորդական աստուածներին միևնոյն յարգանքն էին մատուցանում, ինչ որ գլխաւոր աստուածներին:

Հայաստանում բնակւող օտար տարրը սուաջ բերեց հեթանոսական կրօնի մէջ օտար աստուածներ, որոնք Հայոց գաղափարներին համաձայն չէին, բայց նոցա յատկութիւնները մեզ յայտնի չեն:

Հայաստանում եղած գաղթականութիւնները բազմաթիւ են ուստի և աստուածներն էլ պիտի բազմատեսակ լինէին: Հրէաների գաղթականութիւնը ընդունումէ մի աստուածութիւն, որը հետու է հեթանոսական գաղափարներից: Կային ասորոց գաղթականութիւններ հարաւից (Միջագետքից) դէպի հիւսիս, և Յունաց գաղթականութիւններ արևմուտքից դէպի արևելք. նոքա գալիս էին կամ տիրապետելու և կամ հալածանքից փախչելու համար: Յիշուում է նաև Հնդիկ գաղթականութիւն:

Ասորական աստուածներէից մէկն է Բարշամինայ կուռքը, որ կոչուում է ,Սպիտակափառդիք Բարշամինայ՝: այս աստուածութիւնը, ինչպէս երևում է շատ վաղուց է մտել Հայաստան և մինչև անգամ մրցել է Հայոց աստուածներից մէկի՝ Վահագնի հետ, որն յաղթել է նորան և յարդ է գողացել նորանից (յարդգողի ճանապարհ): Յիշումեն նաև ուրիշ

ասորական աստուածների անուններ Եղեսիայում. որոնք են Բէլ Լայկի ախոյեանը, որ եղել է աստուածների կարգում և Բարեկացւոց մէջ պաշտուել է. ունի երկնքում իւր համաստեղութիւնը և որովհետև Լայոց նահապետնէլ ունի համաստեղութիւն, (Օրիոն աստղը) պէտքէ կարծել, որ նա էլ հին ժամանակներումը պաշտուած է եղել: Թարթայ կամ Թարաթայ, Նաբոյ կամ Նաբոգ և Թաթնիքադ. Սոքա ևս Եղեսիայի աստուածներին են, բայց սոցա յատկութիւնը մեզ յայտնի չէ:

Հնդիկ կամ ճենական գաղթականների (գաղթականութիւն) աստուածներից յայտնի են Դեմետր և Գիսանէս. սոցա արձանները գտնուում էին Աշտիշատից ոչ հեռու-Իննակնեան տեղում, ունեցել են քրմական դաս, ամուր շինուած մեհեաններ իրենց գեանայարկերով, որտեղ պահուում էին նոցա գանձերը: Դեմետր և Գիսանէս երկու եղբայրներ են եղել, որոնք ունեցել են բարձր հասակ, երկար մազեր նոցա արձաններն ևս բարձր են եղել. 12-15 կանգուն. նոցա քրմերն ունէին երկար մազեր և սև դէմք.

Լայոց հեթանոսական կրօնը միանգամից կազմուել չէր կարող, այլ հետզհետէ նախ ընդունուել է բնապաշտութիւնը, ապա մտել է գաղափարական բազմաստուածութիւնը և յետոյ մտել է ծիսականութիւնը:

Ի՞նչ էր հեթանոսական կրօնի անկման պատճառը: Այս հարցը որոշելու համար, նախ պէտք է իմանանք թէ ի՞նչ է նշանակում կրօնի ընկնելը: Քանի որ մի ժողովրդի կեանքը կրօնական գաղափարների հետ համաձայն է՝ կրօնը կենդանի է. իսկ երբ այդ ներգաշնակութիւնը կեանքի և գաղափարի մէջ կորչում է, առաջ է գալիս ծիսականութիւն, որը պատճառ է լինում կրօնի անկման:

Միւս կողմից իւրաքանչիւր ժողովուրդ հետզհետէ հասնում է զարգացման աւելի բարձր աստիճանի, իսկ իւրաքանչիւր զարգացման աստիճան ունի իւր կրօնական գաղափարը. երբ որ իւրաքանչիւր զարգացման միջոցին համապատասխան կենդանի գաղափարներ կան, կրօնը կանգուն է:

Վերջապէս կրօնը այն ժամանակ է կենդանի, երբ մարդ համոզմամբ է ընդունում. ի՞նչ կլինի այն կրօնը, որ հրամանով է ընդունուած: Կլիսի մեռած: Մենք չենք կարող ասել, որ մի ժամանակ հայոց հեթանոսութիւնը կենդանի չէ եղել, որովհետև պատմութեան դէմ կ'մեղանչենք. յայտնի է միայն՝ որ երբ ծիսականութիւնը բռնեց իսկական կրօնի տեղ, իսկ գաղափարը մոռացուեցաւ, այն ժամանակ սկսուեցաւ անկումը:


Երբ ազգը սկսեց հետզհետէ ճանաչել աստուածների անպօրութիւնը, այն ժամանակ եղաւ հեթանոսութեան անկումը: Պատմութիւնից յայտնի է, որ զանազան իշխաններ այլ և այլ ժամանակներում պատկերներ են դրել մեհեաններում և հրամայել են պաշտել. հասկացողները կատարում էին նոցա պատուէրները, իսկ չհասկացողները ակամայ ստիպուած էին հնազանդուելու իշխանի կամքին: Վաղարշակ իւր նախնեաց անդրինները դրեց մեհեաններում, նոյնպէս Արտաշէս Ա-և Տիգրան-Բ-մի քանի պատկերներ բերեցին Յունաստանից:

Եթէ աստուածների առարկան փոխուում է, կրօնի հիմքը ևս խախտուում է (փոփոխուում է):


Երբ ծիսականութիւնը դարձաւ կրօն, ոյժը անցաւ քրմերի ձեռքը. նոքա էին աստուածների գաղտնիքը իմանում, և ժողովրդի կրթութիւնը նոցա ձեռքումն էր, նոքա

ձգտում էին իսկականը թագցնելու. նոցա մեծ ուժը ժողովրդի ազիտութիւնն էր, խաւարը, բայց այդ խաւարի ժողովուրդը չկարողացաւ դիմանալ և ձգտեց ազատուելու, որովհետև չէր կարող ըմբռնել կուռքերի աստուած լինելը:

Գիտակցութիւնը ցոյց տուեց, որ քրմերի գործը խաբէութիւնն է, իսկ այդ գիտակցութեանը մեծ զարկ տուեց Սուրբ Աւետարանի քարոզութիւնը:



[Faint, illegible handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.]



« « Ազգային գրադարան



NL0264769

